

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

55^{րդ} ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 20

29 ՅՈՒԼԻՍ 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ջուղեան Կեակը	ԽՄԱԳՐՈՒԹԻՒՆ
Տառնոցը (Ոսանաւոր- Յանքեզի)	ԱՂԵՔՍ. ՓԱՆՈՍԵԱՆ
Դեական վայրկեաններ	ՏՕՄԻՆՕ
Վ. յաւազրեոզի վանաւոնը (Գերբուած Լաւարդիւնի. —Քարզմ.) Մ.	
Այգեզորժական	Ն. Գ. ԴԱԼՅԱՆԱՆ
Մեմաստաններու շուրջը	Գ. ՎՐԴ. ԱՍԼԱՆՍԱՆ
Վարդի մը համար (Բմայ)	ՊԱՐԷՏ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագրինն է Կ. Պոլսոյ համար Բառսուն դրո. եւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման 12 Զրանք կամ 5 բուլլի: Թղթասարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայմաններով:

Ձեռն-Գէ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՆՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در علیاده غلطاده (مأسیس) غرضه سی اداره

ԽՄԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաքիա

Rédaction de la Revue MASSIS
Galata, Constantinople

UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

Ծարսնակաճիթ

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդից գլխաւոր ըմպելին դարձած է, ա՛յնքան բազմաթիւ տեսակներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լաւ ընտրութիւն մը ընել: Այդ տեսակներէն մասնք նշանաւոր են իբր տխորժակամ եւ քաղցրաբոյր, մասնք ալ թէեւ նոյնքան տխորժակի համ ու հոտ չունին, գերազանց են սակայն իբր կողմերիչ եւ զօրացուցիչ. վերջապէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն ունի որոնք զինքը կը զանազանեն ուրիշ տեսակներէ:



Սակայն կալ թէյ մը, որ այդ յատկութեանց ամէնէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ դոյն, համ հոտ եւ մանաւանդ կողմերիչ եւ զօրացուցիչ անզուգական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաքոնի քէյը, որ այդ յատկու-

թեան շնորհիւ կը յարմարի ամէն տարիքի ու կազմութեան, ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն ճաշակի:

Յալբուխան եւ Իսազուլխան քէյի մեծ վաճառատունը, իր բազմաթիւ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է ճաքոնական զուտ թէյ մասնաւոր եւ գեղեցիկ աւափերով ու կը հրաւիրէ օգտուել այս առիթէն բոլոր անոնք, որ կը փոփոքին ունենալ թէյ մը

Համով. հոտով. առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկական, չինական, Սէյլան եւ Ճաւայի ամենալաւ տեսակ թէյեր:

10 - 10

Պատարուքիւն մարգարի

ԱՅՍ ԿԼԻՄԱՅԻ ՄԷՋ

Ընդհանուր վիշտեր կան որոնք այս աշխարհածանօթ դեղով կատարելապես կը բժշկուին:



SCOTT'S EMULSION

Հաշ, հարուխ, և բոլոր որկորի և թոքի վիշտերինչպէս թոքացաւ, և պրօնշիտ, շնչառութեան և կուրծքի երակներուն փորփոգումը և միւս տկարութիուն պատճառող անհասկալիութիւններ՝ անմիջապէս կը զսպուին, և կը տկարացուին և վերջապէս կը բժշկուին: Կտան նաւանդ ծիրական աստի նկատմամբ՝ առաջին նշանները տեսնուած ատեն, անմիջապէս առաջը կ'առնէ: Երբ ընտանիքի մը մէջ այսպիսի աղետ մը կայ, պէտք դեղարան մը դիմել և

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԵԳՐՈՒԹԻՈՒՆ

մը առնել: Ըսգօթի Բաղադրութիւնը այս աղետը է: զարդեցնէ և տան մէջ ուրախութիւնը կը վերականրէ:

Քիչերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

Բոլոր բեղաճեմները և բեղաճեմները եւ ծախն:

A LA BRODEUSE AU FIL D'OR



MARQUE

DÉPOSÉE

FONDÉE EN 1888

ԱՐԹԱՔԻ Ա. ԽՈՒՄԱՐԵԱՆ

(ԱՍԵՂՆԱԳՈՐԾ)

Մեծ Շուկայ Գալփսգերյաւ Նուրի Օսմանի
Թիւ 5 եւ 11

Այս գոյգ մը մեծ վաճառատանց մէջ կը գտնուի ճշմարիտ մը մէկ տեսակ տեղեկագրութեան և արդուզարդի վերաբերեալ նիւթերու, վերջին նորաձեւութեան, համաձայն: Այսինքն կը համարուի տեսնելով Բարեկէ տեսնելով թոքի և ծախն:

բոլոր, գոյգ, ֆաբրիկ, շինի, վաճառատն գիտութիւնը պատման նիւթը եղող D. M. C. Նիւզ մեծագույն և քոթ, ֆիլի, ֆաբրիկ, գոյգ և գոյգութիւն, կլապան, սքրմ, փաւ և քրթր եւալն. ինչպէս նաեւ արկող, քաւի, և ասոց վրայ կատարուած ճշմարտ տեղեկագրութեան, մեծ և փոքր ծախով:

ՕժիՏԻ համար կ'ընդունուին մէկ տեսակ յաւանքագրութեան նորարարութեան տեղեկագրութեան: ԲԱՌՏԻՍԻՄԵՆԻԻ ճիւղէն զոտ, սոյն երկու վաճառատնները կը հաթարթեն նաեւ ԹԻՅՐՍ ՏԱՅՄԸՆՏ ծանօթ վաճառատն աղանջներէն գոյգութեան տեղեկներ և արդուզարդի ուրիշ տարրեր, իսկ նախ յարեւմտեան:

Ատեղեկագրութեան և պատգամի տեսնել ճիւղերուն մասնագէտ գոյգի մը միւս պատգամ կը գտնուի: Վարժարանաց գրեւորման համար մասնագէտ գեղեցիկ կ'ըլլան: Ինչպէս արդէն բոլոր գիտնէր գիտման լինի էն:

ՄԱՍԻՆ

55^{րդ} ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 20

29 ՅՈՒՆԻՍ 1906

ԶՈՒՆԴԵԱՆ ԿՏԱԿԸ

(ԱՆՁՆԱԿԱՆ ՅԻՇՍՏԱԿՆԵՐ)

Այն աղուամազ պատանիները, որոնք իրենց բարի—վարքի ու չղանաւարտի վեկայականները դողահար ձեռքերով բռնած, վերջին օրերս դիմեցին Պատրիարքարան՝ օգտուելու համար Զունդեան կտակին տրամադրութեան համաձայն եւրոպական Համալսարան մը շրջուելու առաւելութենէն, և որոնք սրտատրոփ անձկութեամբ կըսպասեն իմանալու թէ իրենց մէջէն ո՞վ պիտի ըլլայ բաղդաւոր ընտրելին, չի ճանչցան Աստուածատուր Զունդ Ասպետը։ Եւ հիմայ որ, չըջանի մը նորոգմամբ, այժմէութիւն կըստանայ դարձեալ բարերարին կտակը՝ ապահով հիմերու վրայ հաստատուած ու տեւականութեան ամէն պայմաններով, կ'արժէ որ ծանօթացնենք իրենց այդ պատուական ծերունին որ իր ողբացեալ կնոջ հետ կը հանգչի Շիլլիի գերեզմանատունը, գեղակերտ ու խաղաղիկ դամբարանի մը գմբեթին տակ։

Աստուածատուր Զունդ, իր երիտասարդութեանը, նախ դասատու եղած էր՝ կը պատմէին, յետոյ առուտուրով զբաղած. բաղդը, պարագաները օգնած էին իրեն՝ գործի մէջ յաջողելու և հարստանալու։ Բարեկեցիկ հասառուի մը կեանքը կը վարէր, ձմեռը Բերա ու ամառը Պէոյիւքտէրէ, երբեմնակի ճամբորդութիւններ ալ կատարելով։ Տիկին Նեկտար Զունդ, — հօրաքոյրը Տիկին Գրիգոր Սան Շամտանձեանի և Փանոսեան եղբարց, — առաքինի ու բարի կնոջ տիպար մըն էր, որ առտին չըջանակէն

դուրս ալ՝ կը մասնակցէր իգական սեռի կրթութեան, աղքատ աղջիկներու դաստիարակութեան գործին նուիրուած հանրային ձեռնարկութեանց, ու մեծապէս օգտակար կը հանդիսանար։ Անողոք հիւանդութիւն մը զգետնեց զինքը, յառաջացեալ տարիքին մէջ, Բարիզ գտնուած միջոցին, ու մարմինը Պոլիս բերուելով՝ փառաւոր թաղում մը ունեցաւ։

Այդ միջոցին էր որ բաղդը ունեցայ մօտէն ճանչնալու իր սգաւոր ամուսինը, ցաւակցական այցելութեան մը ու Սեւեկի մէջ իր կնոջ յիշատակին նուիրուած հրատարակութեանց առթիւ, որոնք խորապէս յուզած էին զինքը։ Այն ատենները, ծառօթ և սիրուած անուն ունեցող նշնեցեալներու յուզարկաւորութիւնները հիմակուանէն քիչ մը տարբեր ձեւով կը նկարագրուէին օրաթերթերուն մէջ, և զգացումն ալ իր բաժինը կուենար, փոխանակ ամէն հարուստի դադաղին շուրջը՝ միեւնոյն բաները կրկնուելով՝ ձանձրանալի միօրինակութեամբ մը, անուններու անփոփոխ շարքերով, միեւնոյն դըրուատականներով։

Քանի մը շաբաթ ետք, հրաւէր կըստասայի Զունդ Ասպետէն՝ երթալ տեսնել զինքը Լիւքսեմպուրկի պանդոկը, վերնայարկի խցիկ մը, ուր կը բնակէր մինաւորիկ, լքած իր տունը — տեղը և ծովեզերեայ ամարանոցը թափուր ու ամայի։ Յայտնեց թէ մտադրութիւն ունի հատոր մը հրատարակելու՝ իր կնոջ յիշատակին, — ինչպէս Օրմանեան Ս.

Պատրիարքը ձեռնարկած է այժմ հրատարակելու՝ իր վաղամեռ քրոջ յիշատակին նուիրուած հատոր մը, — հոն ամփոփելով ցաւակցական նամակները, լրագրական հրատարակութիւնները և այլն, և թէ ինձ յանձնել որոշած է տպագրական գործին հսկողութիւնն ու բոլոր աշխատութիւնները։ Աւելորդ է ըսել որ սիրայօժար ընդունեցի։ Ու իսկոյն գործի սկսանք։ Սովորաբար գիշերները կ'աշխատէինք նամակներու դասաւորման, փորձերու սրբագրութեան, ու կը պատահէր որ՝ գրիչը վար դնելով՝ մտերմական խօսակցութեան մը մղուէինք որ ընդհանրապէս կը դառնար իր սուգին վրայ որ որքան կը հինար՝ այնքան թարմ կը դառնար կարծես խեղճ ձերունիին համար։ Հարուստ ու անզաւակ, ինքզինքը ընկճուած, անմխիթար կը գտնէր աշխարհի վրայ ու կեանքը այլեւս հրապոյր չունէր իրեն համար։ Իր բոլոր իտէալը՝ գերեզմանն էր, իր կնոջ քով երթալ թաղուիլ։ Միակ ժամանցը գոր կը գտնէր, միասին կատարած գրաւոր աշխատութիւննիս էր որու միջոցին շարունակ գրիին ծայրը կուգար Տիկին Նեկտարի անունը որ հառաչանք մը կը խլէր իրմէ։

Դիրքը յառաջաբանի մը կը կարօտէր սակայն և Ասպետ Ջունդ յայտարարեց թէ ինք պիտի գրէ զայն։ Եւ արդարեւ, քանի մը օրուան մէջ աւարտած էր ընդարձակ կենսագրութիւնը իր՝ կնոջ, յիշատակներ իրենց երիտասարդութեան երջանիկ տարիներուն, ու տպաւորութիւններ հիւանդութեան և մահուան դառն օրերէն։ Ինծի այնպէս թուեցաւ, երբ կը կարդար ձեռագիրը, որ թեթեւ մեղմացում մը, սփոփանք մը գտած էր այդ գրաւոր աշխատութիւնէն։ Փորձեցի, տեղ տեղ, քանի մը ղիտողութիւններ ընել, լեզուական տեսակէտով, բայց չուղեց բառ մը իսկ փոխել։ Նախկին դասաւորուն կը կենդանանար այդ հարստացած ու դիրքի տէր անձնաւորութեան մէջ, և քիչ մնաց որ գրաբարեան — աշխարհաբարեան վէճի բռնուէինք։

Պէտք է խոստովանիմ, ի պատիւ իր յիշատակին, թէ երբ աւարտեցաւ հատորին

տպագրութիւնը, — որուն պատշաճ անուն մը դնելու համար ալ երկարօրէն խորհրդակցած էինք և որ, վերջ ի վերջոյ, Դամբարան կոչուեցաւ, կարծեմ, — ձերունի հասառուն առատապէս վարձատրեց իր երիտասարդ աշխատակիցը։ Քիչ ետքը, Ասպետ Ջունդը մեկնէր Եւրոպա, երկար ուղեւորութիւն մը կատարելու համար որուն մէջ սփոփանք կը փնտռէր։ Այդ ուղեւորութեան միջոցին իրմէ ստացած սրտայոյզ մէկ նամակս ցոյց տուած էր Յ. Գուրգէն էֆ. ի որ գնահատելով զայն՝ հրատարակեց Պատկեր աօխարհիկ գրականութեան հաւաքածոյին մէջ։ Ուղեւորութիւնը, սուգը եւ տարիքին յառաջացումը գրական մարմաջներ տուած էին իրեն. եւ արդարեւ, ի դարձին իր ուղեւորութենէն, որուն միջոցին այցելած էր նաեւ Նոր Աշխարհի զանազան մասերը ու Նիակարայի ջրվէժին մօտ իր լուսանկարն հանել տուած էր զօսալըջիկներու հետ, ճամբու նօթերով լեցուած յուշատետր մը կը բերէր իր հետ։ Նորէն գտանք զիրար Լիւքսեմպուրկի օթէլին վերնաշարկը, միեւնոյն խցիկին մէջ, եւ յայտնեցի իրեն իմ խոնարհ կարծիքս՝ թէ ուղեւորական ինքնատիպ տպաւորութեանց շարքով մը կրնար երկու հատոր մը կազմել։ համակրեցաւ այս գաղափարին, որուն տրամադիր էր արդէն։ Իր պատմուածքներէն, խօսակցութիւններէն կը նշմարէի թէ ղիտող ուսումնասիրող միտք մը ունէր եւ թէ իր տեսած այցելած վայրերուն վրայ նոր ու շահեկան բաներ պիտի կրնար գրել։ Այս տպաւորութեան ներքեւ՝ կը հրահրէի իր գրական մարմաջները, այն հաւատքով թէ այդ տեսակ երկարաշունչ աշխատութիւն մը միայն պիտի կրնար մեղմացնել վշտանք ձերունիին ցաւը։

Այս առթիւ, խօսակցութիւնը կը դառնար երբեմն մեր հարուստներուն գրասիրութեան, մեկնեաւորութեան զգացումներուն վրայ, երկուքս ալ ընդունելով հանդերձ որ այդ զգացումները չեն պակսիր անոնցմէ գէթ մէկ մասին քով, ինքը փափագող էր աւելի՝ գործնական ձեւի մը մէջ արտայայտուած տեսնել զայնս։

«Բանի որ մտքի ու գրչի աշխատանքն ալ նոյնքան պարկեշտ միջոց մըն է դրամ չահելու՝ որքան վաճառականի գրագրութիւնը, արհեստաւորութիւնը, Պանքայի հաշուակալութիւնը եւ այլն, — կըսէր Ասպետ Ջունդ, այս նիւթին անդրադառնալով, — պէտք է որ մեր հարուստ դասակարգի անհատները այս կարգի աշխատութեանց ու վարձատրութեանց առիթներ ստեղծեն մտաւորական դասակարգի պատկանող այն անհատներուն համար որոնք նիւթական բարգաւաճ վիճակ մը ունենալէ հետո՛ւ են»։ Այդ թուականէն ի վեր, Թաւաճեան մը միայն գտնուեցաւ որ ինքնաբերաբար մտածեց այս կարգի քաջալերանք մը հաստատել գրաւոր քարոզներու եւ հակալքողական յօդուածներու յաջորդական մրցմանց առթիւ, Քաղաքագրին տպագրութիւնը եկեղեցականներուն յանձնելով ու թերեւս աշխարհիկ գրողներէն մէկ — երկուքին ալ վերադաճած ըլլար Հալա Բոլաղիբի մը տպագրութեան գործը, եթէ այնքան գոհիկ ու ծաղրական կերպով մատենին փաթթած չըլլային ոմանք այդ մրցումը . . . մրցանակներու բաշխումէն ետքը։

Ջունդ Ասպետը, առանց բնաւ խօսելու իր կտակին վրայ, իր խօսակցութեանց մէջ կըզգացնէր սակայն թէ լուրջ բան մը ընելու տրամադիր է՝ ընտանեզուրկ ու աղքատիկ տղոց դաստիարակութեան համար, բայց այն կերպով որ զեղծումներու գուռ չի բացուի տպագրին. եւ գաղտնաբար կը խորհրդակցէր օրուան Պատրիարքին հետ, ձեռնհաս փաստաբաններու եւ իր բարեկամ հարուստներու կարծիքն ալ առնելով։

Իր ուղեւորական տպաւորութեանց խմբագրութեան ձեռնարկած էր արդէն այդ միջոցին եւ մասնակի ընթերցումներ կը կատարէինք, երբ հարկ եղաւ յանկարծ որ Արեւելի խմբագրութեան կողմէ իր թղթակից ընկերանամ Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին երուսաղէմ ու աճապարանօք մեկնեցայ։ Վերադարձիս, Ջունդ Ասպետը հեռացած գտայ Պոլսէն. վերջնապէս Բարիդ գացեր հաստատուեր էր, հրաժեշտ տալով Վոսփօրի և փերուն ու երկհատոր գրքի մը հեղինակ ըլլալու գրական անմեղ փառասիրութեանը։

որ պահ մը գգուած էր զինքը։ Ու օր մըն ալ, իր մահուան գոյժը առինք։

* *

Իրա՞ւ է որ Ջունդերուն կտակին տրամագրութեան համաձայն եւրոպական Հասարակարան մը զրկուելու համար՝ ընտրելիներ ունին, նորէն, աս ու ան, եւ իւրաքանչիւրը իր պաշտպանեալին յաջողութեանը կ'աշխատի՝ Պատրիարքարանէ կարգուած մասնախումբին մօտ։ Իրա՞ւ է որ, բարեկեցիկ ընտանիք մը կ'աշխատի իր դաւակը ընդունիլ տալ, ինչպէս կը գրէ Մանգուսէ՝ արեւար գանգատ մը բառնալով հրապարակաւ։ Որո՞նք են այդ մասնախումբին անդամները, ո՞ւր կը գումարուին և ի՞նչ եղանակով պիտի կատարեն ընտրութիւնը։ Ոչինչ ծանուցուեցաւ ցարդ լրագրաց միջոցաւ։

Եւ սակայն պէտք է մտածել թէ ծերունի կտակարարին գերեզմանը այնքա՛ն մօտ է մեզի, և եթէ շեղում մը կատարուի կտակին գործադրութեան մէջ, հէգ Աստուածատուր Ջունդի ոսկերոտիքը պիտի չի խայտան իրենց հողակոյտին մէջ։ Իր յիշատակին ալ պատճառենք այս ցաւը, Սանասարեանցի յիշատակին պատճառուած ցաւէն ետքը։ Այն ատեն, ինչո՞ւ կրկնել ամէն օր, որ մեր հարուստները կտակ թողուն։ Զեղծումներու դժուր բանալու համար . . .

ՏՕՆ ԱԽՄԲՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի օրը, 25 յուլիս, Ամեն. Տ. Մաղաքիա Ս. Պատրիարք Հօր անուան տօնախմբութիւնն ըլլալով, Ն. Սրբաղնութիւնը Պատրիարքարանի մէջ ընդունեց բարձրաստիճան եկեղեցականներու և աշխարհական դասէն ծանօթ անձնաւորութեանց շնորհաւորական այցելութիւնները։ Այցելեցին նաև Հայ Հռոմէականաց կ. — Պատրիարքին և Պուլկարաց էկզարքին կողմէ հոգեւոր ներկայացուցիչներ, Բողոքականաց Ալգասպետ և ուրիշ պաշտօնական անձինք։ Մասիսի խմբագրութիւնն ևս կը փութայ իր շնորհաւորութիւնները մատուցանել Ն. Ամենապատուութեան՝ այս բարեբաւտիկ Տօնախմբութեան առթիւ։

ՏԱՍՆՈՅԸ

Գիւղին մէջ, խարխուլ տընակի մը քով,
Տեսայ տըղայ մը, պղտիկ տարիքով,
Հագած հինումին տափատ ու շապիկ,
Որ, գլուխը բաց, ոտքերը բոպիկ,
Երեսի վըրայ՝ խոտին մէջ դալար
Յորդ արցունքներով բարձրաձայն կուլար:
— «Տըղայ, հարցուցի, ի՞նչ կուլաս այդպէս...»
— «Տասնոց մը առեր էի հայրիկէս,
«Խայիպ եմ ըրեր... չիտեմ ո՛ւր ինկաւ...»
— «Էհ, այդքան լալու պէտք չի կայ բընաւ,
«Ա՛ռ, տասնոց մը տամ քեզի, մի՛ լարալ:»
Դրամն առաւ մանչն ու... շարունակեց լալ:
— «Բայց հիմայ ինչո՞ւ կուլաս դուն նորէն»:—
— «Ա՛խ, ինտո՞ր չի լամ, յարեց դառնօրէն,
«Մէկալ տասնոցը խայիպ չըլլար չէ՛»
«Երկու հատ տասնոց կունենայի տէ...»

Ա.Ղ.ԵՐԵՍ. ՓԱՆՈՍԵԱՆ.

Մայիս 1905

ԳՐԱԿԱՆ ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐ

«ԻՆՏՐԱ»Ի «ՆԵՐՍՇԻՍՐԶ»Ը

Հաշիւի, մօրֆինի խիստ ներարկումէ մը տութեամբը անթափանցելի: Ամբողջ ամիս վերջ հիւանդագին արբեցութեան մատնուած մը զայն գրպանիս մէջ պահած ապրեցայ ես, ինչպէս ո՛րոնք կ'ապրին վիզերնէն կախ fétiche-ի, — տեսակ մը գուրգուրանքով, համակրութեամբ ու տեսակ մըն ալ մօլեռանդութեամբ, — ուզած վայրկեանիս զայն աչքերուս առջև ունենալու, կարդալու, կրկին անգամ նախօրդ էջերուն անդրադառնալու անդիմադրելի բաղձանքով մը, ըլլայ յօգեհտին մէջ, ուր յաճախ գրականութեան, արուեստի անհաղորդ ե տարօրինակէս դրական միտքերու շրջանակի մը մէջ իսկ կը փորձուէի պարզել, բացատրել կարդացուած գեղեցիկ էջի մը հոգին, իմաստը խորունկ, հակառակ անոնց արձակած հեղեական փայտներուն ե անտրամաբան եզրակացութեանց ե ուր երբեմն ալ, լռելեայն կը յսուէի ականարկներս հորիզոնին

վրայ վերջալուսային վարդազոյրովը օծուած , պսակուած աւագերուն , մտազբաղ վիճակի մը մէջ տուայտող մէկու մը դէմքը տալով ինքզինքիս , այս անգամ իրապէս չըմբռնուած չհասկցուած խրթին ու մռայլ էջի մը ընթերցումէն շուարած ու տանջուած :

«Ներաշխարհ»ը բանդագուշանքի , մղձաւանջի , տաժանագին երաղներու և խորհրդաւոր մոլորանքներու գիրքն է որ սակայն կրցած է պարունակել իր մէջ միանգամայն կեանքի փրկիստփայութիւն մը , տեսնուած բաներուն խորունկ տպաւորականութիւնը , զրականութիւն մը խորհրդապաշտ ու սկեպտիկ և մանաւանդ հեղինակին բարձր հոգին որ գերիվեր է ամէն բանէ , ըստ իս , եթէ նկատողութեան առնենք չարքը այն աղնիւ զգացումներուն , յափշտակութիւններուն , ոճի այն ներդաշնակ շքեղութիւններուն , ինչպէս և գաղափարներու այն վեհանձն արտայայտումներուն որոնց մէջ առիկա կը ցոլայ , որոնցմով կը հանդիսաւորուի : Եւ այն հոգին որ բանաստեղծական վսեմ խանդով հրահրուած է միշտ ու նկարչական հզօր ներազդեցութիւններու տակ գրգռուած , այնքան noble է ու միամիտմիանգամայն որ իռնախին , այն կնոջ որ մարմնացեալ խորհուրդ մը , սիրոյ ոգին կը պատկերացնէ , ինչպէս ըսած է ճշմարտիւ Պէրպէրեան էֆ . , հազիւ թէ կը համարձակի ուղղել տարիանքի ու երազանքի սովորական բոռերը ; այլ կը գոհանայ զայն կոչելով « իր գմայլելի բարիքը , շքեղ ու մութ աղջիկ , իր միակ միստիքականութիւնը » այնպէս ինչպէս պիտի կոչէր Վակնէրեան ղիւցազն մը իր սիրեցեալը , անոր ոտքերուն տակ ծնւրադրած աւուրգ կորիւնի մը պէս , բեմին վրայ , հռչակաւոր երաժշտագէտին Crépuscule des Dieux գեղահրաշ թատերգութեան մէջ , օրինակի համար , տեսակ մը վեհաշուք ու գերմարդկային ձայնով մը :

Որովհետեւ , «Ներաշխարհ»ին մէջ չիկայ տող մը գրուած որ բացատրուած ըլլայ banalitéով , հասարակ ներշնչումի մը ասակ կամ յեղինդուած նկարագրականով մը : Ոչինչ գռեհիկ է հոն , ոչինչ սովորական , այլ ընդ-

հակառակը ամէն բան նոր է այս գիրքին մէջ , սկսեալ « Ինտրա » ծածկանունէն որ տառադարձումն է հեղինակին անունան , մինչև վերջին աղօթքը ուղղուած առ Աստուած , դարձեալ խորհրդատեսիլ իռնախի « Լուսեղէն , արփային » ազդեցութեան տակ : Այս գիրքը պէտք է նմանցնել մասամբ երաժշտական այն խորաթափանց , ամէն կանոնական սահմանէ ու հորիզոնէ դուրս երկարաշունչ կտորներուն որոնք կը հմայեն , կը յափշտակեն , կը ցնորեցնեն ունկնդիրը իրենց պարզած դժուարըմբռնելի երեւոյթներով , իրենց մեծվայելուչ ու յաճախ աններդաշնակ ելեւէջներով , իրենց յանդուգն ու հսկայական արտայայտութիւններով , առանց սակայն հիւանդագին եզրակացութեան մը , չփոթ ու խաւարակուռ վերջաւորութեան մը : Ինչ որ ուրեմն կարգ մը երաժշտագէտներ ըրած են , իրենց արուեստական հմտութենէն և հանճարային ներշնչումէն յղանալով գաղտնախուզ ու չնաշխարհիկ հատուածներ և զանոնք ներմոծելով թոյլ ու տաքփատենչ երաժշտութենէ մը անարիւնացած մարդկութեան մը մէջ , Պրն . Զրաքեան կը թուի նոյն բանը ըրած ըլլալ աւելի համեստ կերպով մը թէ և , բայց յաջողութեամբ ընծայելով իր եզական և առաւելապէս հզօր երեւակայութեան մը և զգայնոտ հոգիի մը արտադրութիւնը եղող «Ներաշխարհ»ը , արդի հայ գրականութեան չոր անհրապոյր վիճակէն ձանձրացած միտքերու : Ինչպէս ուրիշ անգամներ , թերեւս հիմակ ալ պիտի գտնուին շատեր որ պիտի գոցեն մէկ կողմ նետեն այս գիրքը , բառ մը չհասկնալով անոր պարունակութենէն , հեգնելով գուցէ զայն և արհամարհելով անոր հեղինակը որ չէր ուզած կամ չէր կրցած ի փոխարէն սալ , իրենց ստամոքսին և իրենց մտքին չափով մարսելի և հասկնալի տափակութիւն մը . . . պուլիսապէս մը օրինակի համար . սակայն բոլոր անոնք որ հետեւած են օտար գրականութեանց աստիճանական այլափոխութեան , իմաստասիրական ու գրական զանազան սեռերու զարգացումին , ծաւալումին , չեն կրնար անտարբեր մնալ նկարիչ -- գրագէտին պար-

զած զգայութիւններուն, չազդուիլ անոնցմէ, նկարագրութեանց ձոխութեան ու մտածութեան ձեւակերպումներուն չյառիլ, չհաւնիլ որչափ որ յաճախակի գործածուած ըլլան այս գիրքին մէջ մութ ու անհաճոյ կարգ մը վերլուծումներ, լեզուական խրթնութիւններ, լեզուաբանի մը, հայադէտի մը քնննութեան վերաբերող ապաքէն:

Եւ ինչպէս որ «մեծապայծառ իմացականութիւն»ը չեղտած էր, «Ներաշխարհ»ը ամբողջ քերթուած մըն է գեղեցիկին և անոր հետ գուզընթաց բոլոր վսեմ բաներուն: Պրն. Չրագեան տկար բանաստեղծ մը չէ, հիմակուաններուն պէս միայն կնոջ մը հեշտաբոյր խռովքը կամ լուսնին յաւիտենապէս միօրինակ ու հինցած դէմքը ութնոտեան ոտանաւորի մը մէջ ամփոփելու չափ, այլ իրապէս ճարտար և մտաւորական բարձր թռիչներու տիրացած քերթող մըն է որ կը տեսնէ կեանքը, կ'ուսումնասիրէ բնութիւնը, մարդիկը, նկարչի մը հոգիով մանրամասնելով, անօտարացնելով, քիւրեղացնելով բոլոր գոյները, բոլոր նրբութիւնները իր վրձինին, երկնքի մեծածաւալ երանգապնակին վրայ: Այսպէս, Սե Ծովու նկարագրութիւնը անեղ ու սարսուռացուցիչ բան մը ունի այնքան որ մարդ կը մղուի մտածելու թէ մի' գուցէ նոյն իսկ Այվազովսկին ըլլայ խօսողը, Չրագեանի բերնով: Դառն է նկարագրութիւնը զոր ինտրա կընէ իր մեռած հօրը վրայ, զայն պահ մը մերկացնելով, արհամարհելով իր մոլութիւններուն, իր թերութիւններուն համար և յետոյ փիլիսոփայի մը ներող չեղտով բարձրացնելով անոր հոգին իր հոգւոյն մէջ, զայն վերապրելով ինքն իր մէջ: Շատ գեղեցիկ ու զուտ տոհմային շունչ մը կայ իր կիրականամուտքի եկեղեցական տպաւորութիւններուն մէջ. չափազանց յուզիչ են այն տողերը որոնցմով կը նկարագրէ մեզի թէ ինչպէս իր ձայնաւորի չափիկը կը պահէր ներսը ժամուն պահարանին մէկ գաղտնի անկիւնը, հետեւեալ օրը զայն կրկին ձեռքովը զրածին պէս զրտնելու տղայական արդար տենչով մը: Մանկական այս միամիտ յիշատակները որոնք

քիչ շատ ամէնունն ալ են, իրենց մէջ ունին տաք ու համակրելի շեշտը այն ձայնին որ հեռուն կը խօսի և որուն կարօտով կըսպասէիր որ խօսի: Հիմա Հալքին, սիրահարներու այս վաղածանօթ embarquement pour Cytheree, նոր ու դիւթական վայր մը դարձած է «Ներաշխարհ»ին մէջ և ինտրա, բանաստեղծական ճշմարիտ գոյներով կը նկարագրէ իր վերելքը իռենաին հետ, կղզիին բարձունքին վրայ, անյագ ու անկեղծ սիրոյ մը երազայնոտ խոհանքներուն նուիրուելու անխառն վիշտով մը: Սակայն, բարձ, Հալքի այս լուսափայլ, հմայական շոճիներու անտառին քով, անոր բազդատելով, քանի մոռալ ու քանի անաւոր է այն միւս անտառն ալ, նոճիներու անտառը ուր ինտրաի վառ երեւակայութիւնը կը սիրէ թափառիլ յաճախ և հոն կ'ապաստանի ամէն անգամ որ տխուր ներշնչումները և անմխիթար զգացողութիւնները կուգան պաշարել զինքը: Խորհրդաւոր ու հեշտ հանգրուան, այս բարձրաբերձ նոճիներու մթաստուեր անտառը, երկիւղած ու կարեկից հոգիներու համար, և որ կը պատկերացնէ մեր աչքին Արեւելքի ընդարձակ գերեզմանոցները, Հապա Բանգը, Jusqu'amer, այս Միջերկրականի գաղջ ծովեզերաց ժանտահոտ ծաղիկը զոր հեղինակը իր գրասեղանին վրայ կը պահէ անդադար և իր մտածումները, իր վիշտերը, իր երազանքները կը հաղորդէ անոր: Օհ, այս ծաղիկը կարելի չէ նմանցնել այն յաճախ անարժէք, բայց միշտ անհասանելի դաղտնիք մը, նախապաշարում մը պարունակող առարկային, թերեւս գեղորին զոր բանաստեղծներ, փիլիսոփաներ ունեցած են իրենց մասնախուցին մէջ իբրեւ զարդ, իբրեւ խորհրդանշան, հին ատենները մարդագանկ մը, օրինակի համար, իսկ նոր ժամանակներու մէջ անսովոր ծխափողը, ժանտատեսիլ դէմքով, ոչ նուազ անսովոր ու եղական բանաստեղծ Թէօտոր տը Պանվիլի և որ խօսակցութեան նիւթ եղած է ատեն մը գրական շրջանակներու մէջ: Շատ ծանօթ է արդէն Պօլլէոի կատուն, թէև նշաւոր արարած մը ասիկա, որ պակաս բաւ

նաստեղծին ճիշդ դէմը poser կ'ընէր ինքզինքը ամէն անգամ որ անիկա, գրիչը ձեռքը, կըսպասէր գալիք ներշնչումներուն, տեսակ մը ջղայնութեամբ ու գրգռութիւնով: Ինտրա, խորհրդապաշտական նոյն մոլեռանդ ոգւով փարած է իր Բանգին և յաճախ հարցումներ կուղղէ անոր՝ կեանքի գաղտնիքներուն վրայ, ինչպէս հնադարեան Սիրիլլան, բախդագուշակ կինը, տեսակ մը ունայնամտութեամբ պիտի ընէր իր առջև չարուած բացուած հրաշալիէսներու հաւաքածոյին:

«Ներաշխարհ»ին մէջ գեղեցիկ էջեր կը գրաւեն նաև շաբաթ իրիկունները, Ինտրաի մօրը, տան մէջ պտտցուցած խուռկին նկարագրութիւնը որ այնքան պերճախօս է ու ձգբրիտ, որքան էր կիրակաժողովի արարողութեանց նկարագրութիւնը Պրն. Չրաքեանի հոգւոյն մէջ խորապէս մօտ գտած ըլլալ կը թուի ինչ որ կրօնքը ու Գիտութիւնը հակընդէմ պայքարով մը բերած դրած են մարդկութեան աչքին առջև, այսինքն Աստուածային զօրութեան մը վրայ կասկածելով հանդերձ, Անոր ներկայութենէն, Անոր մեծութենէն ազդուելու երկիւղը որ միւս զգացումէն աւելի զօրաւոր է միշտ և ամէնուրեք: Գոնէ այսօրինակ եզրակացութեան մը պէտք է յանգիլ կարդալէ վերջ յիմարութեան, ալքօլին և մահուան վրայ Ինտրաի գրած իմաստասիրական տողերը և հասնելէ առաջ այն ոչ նուազ խորունկ տողերուն որոնցմով կը ներքողէ լաւատեսութիւնը և կը հարուածէ յոռետեսութիւնը, երկու մեծագոյն մտահոգութիւնները խորհող Մարդկութեան: Ինչ որ Տէմիրճիպաշեան ըրած է յաճախ առաջները, Օկիւսթ Գօնթի և Սթենսէրի պէս յոռետես իմաստասէրներու վարդապետութիւնը վերլուծելով, Ինտրա նոյն բանը կ'ընէ գրեթէ՝ Շորէնհաուէրը. Գերմանաց այս յոռետես հսկայ միտքը տարրալուծելով և անոր վարդապետութիւնը լաւատեսութիւն նկատելով աւելի քան թէ առողջ և հիմնաւոր յոռետեսութիւն մը:

Բոլոր այս էջերը, գրուած յաջող հայեցողութեամբ ու գրչի ընտիր դարձուածք,

ներով, կը նկատուին եւ պէտք է որ նկատուին լաւագոյն մասերը «Ներաշխարհին», թէեւ հոն, այս գեղեցիկ էջերուն առնթեր պակաս չեն թուով այն կարգ մը մթին ու աղջամղջային էջերը որոնց ընթերցումին տակ միտքը կը չփօթի ու կը բաղխի թանձր խղճողոտներու, ինչպէս ծովու ալիքներէն հալածուող նաւ մը պիտի գար փրկուելու, գիշերուան խաւարին մէջ, անմերձենալի ու ապառաժուտ փոռնքներուն վրայ:

Սակայն որքան մթին ու խաւարտչուտ ալ ըլլայ այս գիրքը, նորէն անզուգական պերճանք մը, ինքնատիպ դրօշ մը եւ դիւթական հմայք մը կը պարունակէ իր մէջ եւ հակառակ իր պարզած կարգ մը արտակարգ սկզբունքներուն, սպաւորական խիստ դատումներուն ու մտքի չափազանցուած ձեւաւորումներուն, հակառակ նոյն իսկ իբր լեզուական զարտոգութիւն համարուող բառերուն եւ մանաւանդ իր անվճարելի ճշօշօշխուրդին, այս «Ներաշխարհ»ը կրնայ նկատուիլ մէկը հայ մտքի արտադրութեան հզօրապէս նոր ու եզականօրէն հեշտ նմոյշներէն զոր սքանչացումով ու համակրանքով պէտք է ողջունենք եւ հիւրընկալենք:

Գոնէ ես՝ այս գիրքը, որքան ալ համեստ իր ձեւին մէջ, արժանի կը դատեմ իբր լաւագոյն ու պատուաբեր դրացի գրադարանի մը լրջութիւնը ու հոգին կազմող օտար ու գեղեցիկ հատորներու առնթեր:

Ռ. ՍԱՄԻԿԵԱՆ

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ Վարժարանի ուսումնական ու նիւթական վիճակին բարւոքման խնդիրը տակաւին ելք մը չստացաւ: Փաստաբան Գրիգոր էֆ. Չաքարեան, որ իբր քննիչ կարին ղրկուած էր Պատրիարքարանի կողմէ, ի դարձին՝ պատրաստած է ընդարձակ տեղեկագիր մը զոր Խնամակալութիւնը նկատողութեան պիտի առնէ իր յառաջիկայ նիստին մէջ, ըստ այնմ ուղղութիւն մը տալու համար յիսուն հազար ոսկի դրամազուխով, հիմնուած այդ կրթական հաստատութեան որուն արդիւնքը դժբաղդաբար ընաւ չհամապատասխաներ ծախսուած մեծաքանակ շուկաներուն:

ՎԱԼԱՍՏԱՐԵՕՁԻ ՎԱՆԱՏՈՒՆՆ ԱՊԷՐՆԵԱՆՑ

ՔԱՐԳՍԱՆԻՉՆ ԱՌ Ա. Բ.

Ի՞նչ չունչ յանկա՛րծ վարեց դըժպի՛ն աշխարհէ մը քեզ հեռու
Սառ սարերուն սա վրայ անչէ՛ն, ո՛ր դու հոգիդ մահացու,
Մինչ հուսկ կատարն հոն մղուեցար խորհուրդներէդ խորագգաց,
Ի՞նչ հմայք ի՞նչ ա՛ն տըւաւ ուրեմն այդ վերելքիդ վերջին կաց:

Վեհ մթութեանց, անտառներու, ալիքներու հմայքն այն
Անժամանակ ծառոց, ժայռից յաւիտենից՝ ա՛նն համայն,
Եւ քնազդն այն սուրբ՝ անձեռնմերձ չըջավայրի մը տենչիկ,
Հեռի կոչկոճ ճամբաներէն զոր կոխոտեն միշտ մարդիկ:

Մինակ չէիր հոն, երկնային սուր ձեւերով տեսիլներ,
Օգտաւացի՛կ երեւոյթներ մարդացուցին շուրջդ այդ վայրեր,
Նըկատէիր տակաւ կարգով, զի այդ բլրոց վերայէն
Սուրա՛ր ոգին մրրկի, սուրա՛ր հոգին ալ Տեառն այն որ էն:

Անոնք անշուշտ մրմնջեցին քեզ վեհ բարբառն անյեղի,
Զոր կը հըծծէ բնութիւնն ինք թշուառներուն հէք սրտի,
Հասկըցա՛ր հոն մրրիկն հովերն և որոտումն աննըկուն,
Ինչպէս տարրերն հասկընան իրարու մե՛ծն այն լեզուն:

Աղօթաւոր միայնութեան խորունկ խոկմանց ոգին այն,
Որ անտառաց լերանց գետոց կը սաւառնի յար վըրան,
Եւ կը բուռնի այն իրաց մէջ՝ որ մեր աշաց թուին դըժպի՛ն
Ա՛ն ա՛ն յաւէտ առ ինք կոչեց ընտիր հոգիքն աննըսի:

Եկո՛ւր եկո՛ւր, ան դերեւեալ ըսաւ սիրոյն տարաբախտ,
Եկո՛ւր զգետնեալ ինք հանճարին մոռացութեամբ ապերախտ,
Վըտարանդուոյն կոչեալ մերժեալ անվերադարձ իր յարկէն,
Եւ յափրացած ամէն բանէ ունայն սիրտին ծակոտկէն:

Հէգք աշխարհի եկէ՛ք դուք ալ, դո՛ւք որ զաւակ էք երկնից,
Եկէ՛ք, հոս կա՛յ դեռ ձեզի ալ ապստտան մը բընակից,
Հո՛ս կան ծածուկ զանձերս, հո՛ս կայ խորհրդաւոր ցընծութիւն,
Որոց վըրայ կը հիանայ միայն՝ ռամի՛կն անհասուն:

Սակայն թէ վեր դեռ կ'ամբառնան ձեր աչերը տեսլասէր,
Վեհ նըկատել այնբաց մէջ ձուլուող լուռ մուռն այն գիշեր.
Եթէ սիրէք բիւ դաշտին վրայ դիտել փըթթումն արփից
Կամ վետվէտումն անամպական՝ ծովուց ալեաց վրայ սնրիծ:

Թէ անդունդին մէջ մռնչող հեղեղին ձայնն ափհի,
Որ ժայռէ ժայռ փրփրափչուր հեծեծանքով կը մոլի,
Կը կորզէ դեռ ձեր չըրթունքէն աղաղակ վեհ և վսեմ.
Ու կը քարչէ ձեզ ալիսայ իր սա՛մանին ի լոյժ սեմ:

Աղոցատերն եղեւնեաց տակ բնութեան տարփին դուք կողմնած ,
Թէ ականջնիդ ունկընդրէ հոն հոգիասքանչ ի հիաց՝
Կողերց մէջէն չլող սրացող գեղեցկասոյլ սիւգերուն ,
Որ երկնային դաշնակին ողբ թըւին երգերն երերուն .

Աստուածային տունկէ մ'ինկած եթէ չիղն այն՝ յոյս զըւարթ ,
Յանկարծ յանկամս՝ ձեր սիրտերուն մէջ բողբոջէ նոր սաղարթ ,
Եւ ծլի ծաղկի անապատիդ հոն մէջ՝ ինչպէս այն արմատ՝
Զոր կը տածէ անհո՛ղ անջո՛ւր ժայռն անբեղուն և փարատ .

Թէ աղօթքն ալ ողողէ ձեզ իր հոգեհոս արտասուօք
Կըրկնել տալով ձեր ծունկերը դէմ Անհունին անբողոք ,
Եկէ՛ք եկէ՛ք , չարժե՛ն . իրա՛ւ՝ ա՛հ՝ ատոնք կեանքս ախարհի
Սակայն՝ բա՛ւ են՝ կ'ապրեցունեն երկնիյ ձեր սիրո՛յն կեանքն արհի :

ՆՈՒԱԳՔ ԼԱՄԱՐԴԻՆԻ

Քարզմ. Մ.

ՎԱՐԴԻ ՄԸ ՀԱՄԱՐ

(ՔՄԱՅՔ)

Օգոստոսի սկիզբը զբաղիլ վարդո՛վ ,
խենդութիւն է պարզապէս , գիտեմ : Ասոր
համար է որ մայիսը այնչափ երկար է ար-
դէն : Եւ սակայն գոյութիւն ունի հիմայ այդ
վարդը ձեռքիս մէջ ու երեւակայութեան
թեւերուն յենած չէ որ մտածմունքս կը սա-
ւառնի վարդէն՝ վարդի գաղափարին :

Պզտիկ կորացած ցօղունիկի մը , երկու
երեք տոգոյն կանաչ տերեւներու մէջ գըլ-
խահակ դիրք մը ունի վարդս , ինքն ալ
պզտիկ սիրուն , կոկոն մը գրեթէ որ հազիւ
բացուելու հակամէտ՝ անշատած են զայն
թուփէն : Կանաչի զարնող տմոյն գոյն մը
ունին անոր բացխփիկ թերթիկները , տըժ-
գոյն կարմիրով մը գունաւորուած : Այնչափ
խուսափուկ , այնչափ տոգոյն այդ կարմիրը
որ քեզի պիտի յիշեցնէր կոյս մը խպնոտ որ
կըսեսի տակաւ համարձակութիւն առնել :
Աւելի վերը՝ բերանին մօտ՝ նեղ բացուածքը
տմոյն դէմքի մը վրայ նկարուած կարմիր
չրթունքներն են կըսես . կարմութիւն մը
կայ հոն որ կարծես հետզհետէ թանձրանա-
լով կ'երկարի Ռինչ և հոն ուր ալլեւս բան

չը տեսնուիր : Ամօթխած աղջիկ մը գոգցես
իր թաքուն հարստութիւնները պահել մտադ-
րած :

Բայց ինչպէս պիտի հազուստի մը վրայէն
պիտի կրնայիր մարմինը ընդնշմարել , եր-
եւակայութեամբ քանդակել զայն մտքիդ
մէջ , երբ այդ մարմինը իր գրգռիչ գիծերով
հրայք մը պիտի ծնանէր ներսիդիդ , այնպէս
ալ իմ վարդս որքան ախատէր բաժակին
վրայ գտնուած խիտ ու պզտիկ թերթիկնե-
րով ծածկել իր հոգին , դարձեալ կարելի չէր
ըլլար իրեն այդ հոգիէն մաս մը դուրս տալ ,
զքեզ խօլ տենջանքներով օրօրող երազային
նիւթ մը արտաբերել : Բոյրը իրեն մեղմ՝
սակայն մեղկ ու աղու միանգամայն , որով-
հետեւ չըսի կարծեմ ձեզի թէ վարդը զոր
ունիմ ձեռքիս մէջ , հոտ մըն ալ ունի աղւոր :

Ի զուր կ'աշխատիմ սակայն այդ բոյրը
վերլուծել , անկարելի կըլլայ այդ ինծի ,
վարդերու amateurիս : Մինչև ցարդ նոյն
հոտը վարդէ տարբեր իրերու , բայց երբեք
վարդի մը մէջ զգացած չէի : Աւելի չնչաւոր
էակի մը , վարդերու բանական ընկերներուն
վերաբերած հոտ մը : Կը հետաքրքրուիմ ,
կը հոտոտեմ նաեւ ցօղունիկն ու կանաչ տե-
րեւները եւ զարմանալի բան , անոնք ալ
նոյն բոյրը ունին ու կը ստիպուիմ ցաւ ի
սիրտ մտածել թէ վարդիս հոտը եկամուտ

է աւելի. փոխ առնուած բան մը վերջապէս
և երբ թերթիկներուն մէջ կը նշմարեմ պըզ-
տիկ, յատ պզտիկ կլորութիւն մը, աւելի
անօր քան առաւօտեան ցօղը ուր սակայն
ծաղկին հոտը աւելի բարկ կը զգացուէր, կը
կարծեմ թափանցած ըլլալ ամբողջ գաղտ-
նիքին, մտածելով որ իմ խեղճ վարդիս
պզտիկ ճամբորդութիւն մը ընել տուած են
դէպի... հոտեղինաց աշխարհը:

Բայց ոչ, անձնասէր եմ. կ'ուզեմ վանել
այդ գաղափարը: Ես կը սիրեմ յուսալ թէ
վարդը զոր հիմայ մատներուս մէջ բռնած
եմ եւ որու մեղկ բոյրը կը զգլխէ զիս, ա-
ռած է իր հոտը այն կուրծքէն որուն վար-
դը կը կազմէր դեռ քիչ առաջ և այն նուրբ
անօր կաթիլը ուր հոտը աւելի բարկ է,
թանձրացումն ու թարգմանը այն վտին զոր
նուիրատուն ունեցած է մէկ տարուան սի-
րոյ տխուր՝ սակայն այլեւս անկրկնելի սպա-
սումի մը մէջ:

Ու այսպէս կ'արծուած, աւելի ևս կը
սեղմեմ վարդս որ ո՛վ գիտէ սիրոյ ի՛նչ
կարգի մտածումներու ծնունդն է համակ...:
Ես ալ իրեն բաներ մը ըսի, չրթունքներս
բաներ մը միմեացին իրեն բերնին և այն
կէս մը փթթումը զոր ունեցաւ սիրոյ տաք
շունչին տակ, խորշ մը կաղմեց ուր գնաց
տեղաւորուել ուրիշ կ'սթիլ մըն ալ նոյնչափ
նուրբ, նոյնչափ անօր:

Մ. Ֆ. ԷՊԼԻՂԱՅԵԱՆ

ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ

Ս.

Հռչակաւոր այգբան եւ այգեգործ Կիւսթավ Ֆօթրսի
կեանքն ու գործերը.

Անոնք որ նոր դրութեամբ այգեստան
հաստատելու նպատակաւ, ամերիկեան որ-
թատունկերով զբաղելու առիթն ու պատե-
հութիւնը ունեցած են, գէթ անուամբ կը
ճանչնան Գաղիացի նշանաւոր այգեբան
(ampélographe) և այգեգործ Պ. Կիւսթավ
Ֆօթրսը, որու մահուան անակնկալ գոյժն

հաղորդեցին վերջերս Գաղիոյ գիտական
հանդէսները: Վաթսունմէկ տարեկան հա-
սակին մէջ աշխարհի հրաժեշտ տուող այս
պատուական և մեծանուն գիտունը անշնչելի
կերպով արդիւնաւոր հետքեր կը թողու իր
ետին:

Տրօմ գաւառին Մօնթէլիմար քաղաքին
մօտակայ իր սեփնական տիպար-ագարակին՝
Քօլասի մէջ հոգին աւանդող այս գիտնական
անձնաւորութիւնը, ոչ միայն Գաղիոյ, այլ
և համայն Եւրոպայի մէջ, այգեբանութեան
և այգեգործութեան յառաջդիմութեանը հա-
մար մեծամեծ և անգնահատելի ծառայու-
թիւններ մատուցած ըլլալուն պատճառաւ,
կ'արժէ անշուշտ որ իր օրինակելի կենաց
մանրամասնութիւնք՝ Թուրքիոյ ագեգոյծ
դասուն ևս ծանօթ ըլլան, քանի որ
անժխտելի իրողութիւն մըն է թէ, մեր այ-
գեստանաց մէջ որթալուծի երեւումէն ի
վեր, մեր այգեգործներն ալ օգտուած են իր
հոտութեան պաշարէն:

Որթալուծէ և անկային հիւանդութիւն-
ներէ վարակուած երկիրներու մէջ, այգե-
գործութիւնն՝ այսօր բաւին բովանդակ նը-
շանակութեամբ, բաւական կնճռոտ արուեստ
մը դարձած է, քանի որ այգեգործն ստիպ-
ուած է իր ունեցած հողին քիմիական և
ֆիզիքական բնութեանը համեմատ, ամերիկե-
եան սա կամ նա որթատունկն ընտրել, տե-
ղականը վրան պատուաստելէ առաջ դարձ-
եալ նոր ընարութիւն մ'ընել, թիւն հետըզ-
հտէ բաղմացող կարգ մը անկային հիւան-
դութեանց առաջքն առնել և ի հարկին
դարմանել, վերջապէս կարգ մը խնդիրներ,
որոնք 30—40 տարիներ առաջ գոյութիւն
չունէին:

Այգեբանութեան և այգեգործութեան
վերաբերեալ բոլոր այս խնդրոց մէջ, ան-
վիճելի ձեռնհասութիւն և գրեթէ տիեզե-
րական համբաւ ու հեղինակութիւն ունեցող
մեր պատուական վարպետն, իր երկրագոր-
ծական ուսումնի ստացած էր Կրինեօնի համ-
բաւաւոր և վաղեմի հողագործական Ուսում-
նարանին մէջ: Գաղիոյ այդ ամէնէն հին
հաստատութեան մէջ, ուսանողի օրինակելի

վարք և յարատեւութիւն մ'ունենալէ վերջը փայլուն քննութեամբ մը ստացած էր հողագէտ — ճարտարագէտի վկայական: Կ. Ֆօէքս՝ մեկնելով Կրինեօնէն, ժամանակ մը Վաուի և Վօքլիզի գաւառներուն մէջ գործնական երկրագործութեամբ զբաղեցաւ: 1872ին, երբ Տուպի գաւառին մէջ գտնուող Սօլսէի հողագործական ուսումնարանը փոխադրուեցաւ ի Մօնրէլիէ, Կ. Ֆօէքս երկրագործութեան ուսուցչի պաշտօնին կոչուեցաւ հոն: տարի մը փոխանորդաբար այդ պաշտօնը վարելէ վերջը, իր անուանումը վերջնական հանգամանք ստացաւ:

Այդ միջոցներուն, ամերիկեան որթատունկերու միջոցաւ Գաղիա փոխադրուած որթալուիճն սկսած էր արդէն մեծամեծ և արագ աւերումներ ընել երկրին հարաւային այգեստաններուն մէջ: Կ. Ֆօէքս խիստ մօտէն ականատես եղաւ այգեստաններու այս տխուր վիճակին: որթալուիճը բնաջինջ ընելու միջոցներ խորհող, այս մասին գործնական փորձեր և խուզարկութիւններ կատարող անձանց աշխատութիւնները մօտէն տեսած և յաճախ մասնակցած, անոնց հետագօտութեանց եղանակին կատարելապէս վերահասու եղած ըլլալով, ինքն ալ անոնց հետ սա եզրակացութեան յանգած էր թէ «Այսուհետեւ ամերիկեան որթատունկերը միայն պիտի կարենային ապահովել այգեգործութեան ապագան Եւրոպայի մէջ»:

Բլանշոնի, Բիւլեաի, Էմէ Շամբէնի, Սահիւի, Ֆիցճէյմսի զքսուհոյն, Կասթոն Պազլիի, Հէնրի Մարէսի, Լուի Վիալարի, Միյեարտէի և այլ գիտնականաց և կարող այգեգործաց հետ՝ միահաղոյն յղացուած այս գաղափարին իրագործմանը համար, այնքան անհատում ճիգեր թափեց Ֆօէքս, այնքան մեծ ջանքեր ըրաւ, այնքան անսպառելի եռանդ ցոյց տուաւ, որ իրաւամբ ամերիկեան որթատունկերու առաքեալը կոչուեցաւ, այսպէս խելով ամէնուն զարմացումն ու հիացումը:

Մօնրէլիէի Հողագործական գաւառային կաճառին կողմէ՝ նոյն քաղաքին մէջ ամէն տարի կանոնաւորաբար գոմարուող այգե-

գործական Քօնկրէները՝ դաղիացի, իտալացի, սպանիացի և այլ ազգաց գիտնական պատուիրակներու ժամադրաւայր դարձած էին: Հողագործական Ուսումնարանին մեծ ամփոթատրոնին մէջ տեղի ունեցած այդ պատկառելի համախմբումներուն մէջ, Կ. Ֆօէքս մեծ հեղինակութիւն կը վայելէր: ամէն ոք ուշադրութեամբ մտիկ կընէր անոր լուրջ և յստակ բացատրութեանց և գիտական առողջ տեղեկութեանց, վստահ ըլլալով կատարելապէս թէ, անոնք հիմնուած էին միշտ փորձառութեան վրայ: Զանազան ազգերու պատկանող այդ պատուիրակները և ամէն կողմէ հոն խոնուած այգետէրերը, օգտուելով Ֆօէքսի գիտութենէն, ի դարձին միշտ ջանադիր կ'ըլլային իրենց հայրենաւիցիներն ալ մասնակից ընել այգեգործութեան օրըստօրէական արագ յառաջդիմութեան և զարգացման:

Եւրոպայի ամէն կողմը արձագանգ գըտնող գիտական այդ մեծ համաժողովներուն մէջ ուշադրութեան առնուած խնդրոց գըլխաւորներն հետեւեալներն էին. —

1. Ամերիկեան որթատունկերն ինչպէ՞ս կարող կ'ըլլան դիմադրել որթալուիճի աւերմանց:

2. Որո՞նք են այդ որթատունկերուն ամէնէն նշանաւոր և օգտակար տեսակները, թէ՛ իբր պատուաստման յարմար և թէ՛ ուղղակի բերք արտադրող:

3. Տարբեր տարբեր բաղադրութիւն և բնութիւն ունեցող հողերու մէջ, այդ տեսակներուն բռնած ընթացքը, թէ՛ հանդէպ հողին և թէ՛ հանդէպ վրան պատուաստուած տեղական որթատունկին:

4. Ամերիկեան որթատունկերու պատուաստման եղանակը և ամառուան մէջ անոնց տրուելիք խնամքները:

5. Որթալուիճի աւերումները թեթեւցընելու համար ի գործ դրուած ամէնէն գործնական միջոցները, որոնք են՝ գործածութիւն ծծմբի ածխատի (sulfure de carbone) և կալի ծծմբատի (sulfocarbonate de potassium), ամառնային և ձմեռնային ոռոգում, (irrigation d'été et submersion),

աւազային հողերու մէջ անկարկում (plantation dans les terrains sablonneux) :

6. Այգեստաններու մէջ պատահած և մոխրախտ (oidium, քիւլլէմէ), միւտիու, ածխախտ (anthracanose, քէօմիւր խասթաւըզը) սևախտ (black rot, քըզըլմա) անուամբ ճանչցուած անկային հիւանդութեանց տարածման եղանակը և ի գործ դրուելիք ամէնէն գործնական դարմանները :

7. Այգեստաններու մէջ պատահած դալկախտ (chlorose, սարըլըք) զէպքերը և անոնց դարմանները :

8. Ուղղակի բերք արտադրող ամերիկեան որթատունկի խաղողով գինի չինելու եղանակները :

Այգեգործութեան և գինեգործութեան վերաբերեալ սոյնօրինակ դեռ ուրիշ կարգ մը խնդիրներ, այդ համաժողովոյ մէջ քննութեան հրապարակաւ և մանրակրկիտ եղանակաւ : Ամերիկեան որթատունկոց հետ ծագում առած սոյն խնդրոց մասին, Ֆոէքսի կողմէ տրուած լուսաբանութիւնք, միշտ գոհ կը թողուն իր բազմաթիւ ունկնդիրները, որոնց մէջ երբեմն Ֆրէյսինէի, Հէրվէ — Մանկոնի նման ակադեմականներ, նախարարներ և կառավարական ուրիշ բարձրաստիճան պաշտօնարներ, այ տեսնել հազուագիւտ չէր. գիտական մամուլն ալ ընդարձակ էջեր նուիրելով այդ թանկագին լուսաբանութեանց, չէր մոռնոր երբեք աւելցնելու թէ՛ Գաղիոյ ինչպէս նաև Եւրոպայի բոլոր այգեգործներն յաւէտ երախտապարտ պիտի մնային այն խումբ մը յաւէտ ողջախոս անձանց որոնք Ֆոէքսի հետ հոգին կը կազմէին այդ գիտական համաժողովներուն :

Գաղիական կառավարութիւնը գնահատելով ըստ արժանւոյն Ֆոէքսի տարած ջանքերն ու մատուցած թանկագին ծառայութիւնները, նշանաւոր գինեւան Տօքթ. Բամիլ-Սէն-Բիէրի վաղահաս մահուամբ 1881ին թափուր մնացած Մօնթէլիէի հողագործական Ուսումնարանին Տնօրէնութիւնն իրեն յանձնեց. արդարև խիստ արժանաւոր ընտրութիւն մըն էր սա : Ֆոէքսի պաշտօնակիցները և բազմաթիւ բարեկամները ու համակրող-

ները ուրախութեամբ ծափահարեցին այն ատեն այս յաջող անուանումը, որովհետև լաւ գիտէին թէ, յաւէտ ողբալի Տօքթ. Բամիլ-Սէն-Բիէրի, այդ նշանաւոր բնաւորին և գինեւանին ամենօրեայ աշխատակիցն ու գաղափարակիցն եղող Կիւսթաւ Ֆօէքս, բնական ժառանգորդը պիտի ըլլար իր նախորդին գաղափարներուն և աւանդութեանց, ինչպէս որ կ'ըսէր այն ատեն, Ամերիկեացի Որթատունկ Հանդէսին մէջ, Մօնթէլիէի բուսաբանական հոչակաւոր և հինաւուրց⁽¹⁾ պարտէզին ոչ նուազ հոչակաւոր բուսաբան և այգեբան Տնօրէնը, անմահն Բլանշօն :

Կ. Ֆօէքս իր մեծանուն նախորդին նշման, գործին բուն մարդն էր, ինչպէս իրաւամբ կ'ըսէ անգլ. առածը (the reight man in the reight place). ամէն ոք վստահ էր թէ, իր Տնօրէնութեան ներքև, ա'լ աւելի մեծ և տիեզերական համբաւի մը պիտի տիրանար Գաղիոյ ամէնէն աւելի համալսարանական մեծ կեդրոնին մէջ հաստատուած՝ Այգեգործական և Շերամաբուծական այդ մեծ և միակ հաստատութիւնը, ապագան կատարելապէս իրաւունք տուաւ իրենց :

Կ. Ֆօէքս որուն մահը անդարմանելի կորուստ մըն է բոլոր այգեգործ երկրաց համար, 16 տարիներ շարունակ և մեծ հեղինակութեամբ վարեց Մօնթէլիէի հողագործական ոռոգումնարանի Տնօրէնութիւնը, միեւնոյն ատեն հակառակ իր պաշտօնական բազմապիտի զբաղմանց, չդադրեցաւ երբեք այգեգործութեամբ և այգեբանութեամբ զբաղելէ, տեսական և գործնական կերպիւ : Դաղիոյ մէջ (մինչև իսկ Կարելի է ըսել Եւրոպայի մէջ) առաջին անգամ ինք յաջողած էր հաստատել տալ այգեգործութեան դասընթացք մը, որով աւելի ևս մասնագիտօրէն այդ ճիւղով զբաղելու աւիթն ու պատեհութիւնն ունեցաւ. այդ ճիւղն՝ ինչպէս որ ըսինք, որթալուծի և անկային հիւանդութեանց (maladies cryptogamiques, էմրազը թիւֆէյլիէ) պատճառաւ, կենսական խնդրոյ մ'երեւոյթն էր առած այն ժամանակ թէ՛ Գաղիոյ և թէ Եւրոպայի մեծ մասին մէջ :

(1) Հիմնուած Հանրի Դ.է, 1454ին :

Կ. Ֆոէքսի նախաձեռնութեամբ և անդու ջանքի շնորհիւ, կազմուեցաւ այն ճոխ և դասաւորեալ հաւաքածոն, ուր կարելի է գտնել՝ աշխարհի հինգ մասանց պատկանող որթատունկերու բոլոր տեսակներն և զայնս իրարու հետ բաղդատել. այսօր՝ այդ հաւաքածոն, շնորհիւ հիմնադրին և անոր յաջողագոյն աշակերտաց, Բիէր Վիալաի, Լ. Րափաղի և այլոց, տիպար—այգեստանի մ'երեւոյթն է առած՝ որով հողագործական Ուսումնարանին բազմաթիւ ուսանողացը համար, թանկագին ծառայութիւն մը կը մատուցանէ տարիներէ ի վեր. ո՛չ միայն Գաղիոյ, այլ Եւրոպայի չորս կողմերէն յաճախ կը դիմեն հոն, ամերիկեան և եւրոպական որթատնկոց բոլոր տեսակները մօտէն ուսումնասիրելու, այգեգործութեան վերաբերեալ նորանոր ծանօթութեանց տեղեկանալու, իւրաքանչիւր տեսակ որթատունկի յատուկ եղող՝ յօշոտման եղանակին վերահասու ըլլալու համար:

Ն. Գ. ԳԼԵԱՅԵԱՆ

ՆԱԽԿԻՆ ՏԵՐԵՆ

Կայս. Երկրագործական Վարժարանին

Պրուսայի

ՄԵՆԱՍՏԱՆՆԵՐՈՒ ՇՈՒՐՁԸ

Ս. ԼՈՒՍԱԻՈՐԻՉ ՆԻ ԱՆԱՐԾԱԹ ԲԺԻՇԿ

Ընդհատած ճամբորդութիւնս կը շարունակեմ, բնութեան լուին ծոցին մէջ ինքզինքըս երջանիկ զգալով պահ մը: Բլրակի մը վրայ ենք, ձախերնուս Ասլան Թէփէն է՝ իր համբաւաւոր հնութիւնովը, դէմերնիս շարքն է Ժայռ-քարերու շղթաներուն, որուն կողին կպած է Անարծաթ Բժիշկի վանքը, աջերնուս այգեստան մը իր միլիոնաւոր որթատունկերով: Բլրակէն աչքերնիս չը յագեւար դիտելէն, ակնթարթի մէջ կարծես ամէն ինչ կերպարանափոխուած է, զի այնչափ բազմազան ու բիւրազան են տեսարաններն, ու բազմերանգ ու երփնեքաք են կանանչներու, ծառերու ու ծաղիկներու տեսակները: Կողմնակի ակնարկներու կը հանդպի Բունար

Պաշլի հովիտը, Անարծաթ Բժիշկի Ս. Կողմոսի և Դամիանոսի վաղնջական մենաստանի ոտքերու տակէն մանր մանր կը պտան ջրերը, ու յետոյ կ'առուանան ու քիչ վարը կը յորդեն Յ—Հ տեղերէ, ու անուշ փռուածք մը որ կը սահի ու կը նազի նազելաճեմ, արծաթի պէս փալփլուն. ու կը չռայեն կանանչին իրենց կազդուրիչ ոյժը, իրենց անհնշան պղպջակներով ունին կենդանացնելու տարրեր. այս ջուրը չատ մը գիւղերու ջիղն է ու հողին, անթիւ ծառեր, բազում արտեր ու արօտավայրեր իրեն կըսպասեն: «Անարծաթ»ը հոս ալ իր այն տեսակ մը բժշկութիւնը ցոյց կուտայ: Բլրակին առջին ենք. իր կշտին ու մնարին մօտ կը դիտենք զայն աւազակոյտերու մէջ ընկողմանած, փեթրկած թափթփուքները զոր կը կոխկըրտենք այնչափ կ'ասղոտէ մեր հօգին. ասկէց ԾՕ տարի՝ առաջ դեռ կանգուն է եղբի եկեղեցին և հանգուցեալ Սրապիոն եպիսկ. ալ պատարագած է: Շատ մեծ ու ճոխ վանքի և գեղեցկադիր շէնքի մը վկաններն եւ հետքերը: Հայ առուղներէն մէկն ալ սա քառեակը նուիրեր է անոր.

Անարծաթ Բժիշկն ալ վրան շինուած է Մելիտինու քաղաքն ալ ջրին էհտաճ է Զօրեղ լուսաւորիչ Մեծդ Ս. Փրկիչ Հիւանդաց օգնական Անարծաթ Բժիշկ:

«Անարծաթ Բժիշկ»ը երկու խոշոր վանքերու կեդրոնը շինուած է, իրապէս աղւոր հովտի մը մէջ, ծառերը իրենց թարմ կապուտ ոստերով անխօսուկ երգեր կը յօրինեն մենութեան վափկիկ ծոցին մէջ: «Անարծաթ»ի կանանչը հոս ընդարձակ թափչ գորգ մը ձեւացուցած է, այնչափ նաշխուն ու խորտիկ, և որպէս զի այս գորգը առանձնութիւն մը չը կազմէ՝ կողեր ու բլուրներ ու մինչև քարի խոռոջներ տեսակաւոր գորգերու դրսերեւոյթն առած են: Ու բունարը աւելի նազելիացած է հպարտօրէն ու ձկունօրէն, զի կանանչը երիզած ու շղարշած է զինքը հարսնուկի մը պէս. ինքը կանանչէն մղուելով կը թափի ձորերն ի վար, կանաչի հոյզն ու թոյրը քամքմելով: Բաց ու բոց

ընտելեան այս մենիկ մենաւորութիւնը կ'եփի ու կեռի ու դուրս կուտայ անմեռ ու ճոխ կենսունակութիւնը հովտին . այս չքնադագեղ վայրին յարգը աւելի գարնան մէջ կը ճանչցուի ու բիւրաւորներ իր հիւրն են ամէն սեռէ ու տեսակէ , հոս խինդ երգ , ցինծ ու կնճում , լուղ ու լող Անարծաթի ջրին մէջ մասնաւոր համ ու հոտ մը ունին , կնիկներու խմբակն ալ անթիւ է , որոնք կը վազվզեն լուղ ի լուղ , կը թաքչին կը սուղին արծաթի շերտերու նման . քնքուչ այս տեսարանէն չը կշտացած , իր վրայէն անցնող կառուղիին անցորդն ալ չը դադրած , նորէն յուղի կիջնենք հոսկէց դէպի Լուսաւորչի վանք . դաշտը կը կորսնցնենք , կը կոխկրտենք լերկ բլուրներ ու չոր գետիններ , կորթ ու խոպան վայրի քնքուլութիւններ ու հակապատկեր , կը բարձրանանք դէպի Պէկ Տաղի , գրաստին աթուրը կառքին անիւը տարիններուն ընթացքին մէջ ահօսներ փորելով չորուկ ճամբայ մը շինած են . մէկ ժամ բարձրանալէ վերջ , ճոխ ու յաղթ , աւելի նկարուն ու , ակնահաճոյ դիրքի մը վրայ կը գտնուինք , վանքին դռնէն իսկ կանանչի բզքառումները ու ծուէնները ցցուած են մօտէ ցնեռին , չհտանիր կանանչը ու աչերդ կը մանեն անոր խորը որ անտառի մը երեւոյթով ծայրալիր յղփութիւն մը ցուցադրած է ու կը սուզուիս ծոցն ու գիրկը , Լուսաւորչի վանքը Պէկ Տաղիի սափորտը Զեօշնեկի դրկեց Գօզլլիքի վրայ կեցած է հնօրէն , հաւատաւոր բազմութիւնը խնճախաճ լցուած է , այլազանութիւն մը տարազի , սեռի , ծերի ու երիտասարդի : Ս . Լուսաւորչի «Նին ի վիրապէ» տօնի օրն էր : Վանքեր ընդհանրապէս բլուրի մը և կամ լեռան մը կողին բարձրացած են , ու այս առթիւ է որ սքանչելի դիրքերու , պանծալի , տեսարաններու հանդիսատես կ'ըլլան ուխտաւորները . ունին բուռ բուռ գեղօններ իրենց չորջն ու առջնը որոնց մէջ ջրերու յատուկ հիանալի զով ու հով աղբերակները , ակներն ու առուներ կը վխտան :

Վանքին մէջն ենք : Սրբավայրն իր եղական դիրքովը խոր տպաւորութիւն կը գործէ ամէն հաւատարմի , մէկ կողմէն իր հնամենի

հաստատութիւնը դարաւոր , միւս կողմէն լեռներու յըջանակը , որոնք ուժգնապիւրկ բազուկներ երկնցուցած են , բլուրներ բաց բացաստաններով կը խայտան առջևդ , դաշտեր ու դուրաններ կը պանծան . մինչ ասոնք կը ցնծան՝ Արեւը իր հսկայ բարձունքէն վար կը հոսեցնէ իր ճառագայթները լեռն ի վար ու ձորն ի վար , պայծառ , չողտաք , ու առատ : Վանքը կարծես այս ամէնէն աւելի մօտն է երկնքին ու անոր ճառագայթներուն , որոնց բարկ տաքութիւնը ու սաստկութիւնը աւելի շատ կը բլլակնէ ու կը չլացնէ մարդուս աչքը : Հեռուն , մինչև Մարաշի , Ակնի , Արաբկիրի , Սվազի ու Խարբերդի լեռանց ձիւնազարդ կատարները , Եփրատի , Մեւսի , Տէրմահի , Բունարի հեղախափուռաճքներն ու օձապտոյտ գրնացքները , Պօսի , Խարբերդի , Աղճատաղիի սողոսկուն լայն ու նեղ աւազապատ ճամբաները որոնք լեղուակներու պէս երկնցած են դաշտերու մէջը ու նշդրակներու պէս հողերը կտրատած լեռները խածատելով հեռուն շատ հեռուն բազուկ նետած են , համատարած դաշտերուն մէջ կանաչի ծովակներ ցցուած դէղցած անտառներ , հովիտ ձոր ու ձորակ , թուփ ու թաւուտ , ծործոր ծմակներ , աղճատ ու գնտակ գլուխներ ժայռերու բիւրբիւրուց , հին քաղաքն ամբողջութեամբ վանքին ոտքին փռուած , նորն ալ իր կողերովն դարպասի կեցած յորդ առատութիւն մըն է որուն ականատեսը հանդիսատեսը ու նկարագրողն ինքն եղած է վանքը , իր շուրջը երփներանգ թիթեռնիկներու պէս կապոյտ կանանչ , ճերմակ թուխ գոյներու հոյլեր ու բոյլեր կը թրթռան թեւաբախ , սարերէն ձորերէն կատարներէն փչող մեղմահոս ու տատան զով ու մեղմ հովերու համբոյրներուն տակ :

Վանքը շինուած է չորրորդ դարուն վերջերը ի յարգանս Ս . Լուսաւորչի . ըստ աւանդութեան , մէկ քանի օրեր այս մենաբանին տեղւոյն վրայ հիւր կըլլայ հիւրնկալու տիրոջ մօտ , մեկնելէ վերջ յաւերժացնելու համար բարեկամութիւնը , հիւրընկալին անուանը կը կանգնեցնէ այս մենաստանը :

դիրքը եղական ու բարձրահայեաց է, տեսարանն ապշեցուցիչ, օդը աննման մաքուր, ջուրը քաղցրահամ, վանքին շէնքը մինչև 30—40 տարի առաջ միայնակ է եղած եւ 13 սենեակ ունի եղբւր ու վերջերը վերնաշարկ մը շինած են անշուք ու անճաշակ, տաճարը որչափ փոքր է այնչափ հաստատուն է. ԺԴ դարուն նորոգութիւն մը կրած է, ինչպէս տաճարի դրան վրայ գրուած է «Շինեցաւ դուռս Սուրբ Գրիգորի, ձեռամբ Սիմէոն Եպիսկոպի ի Թւին ՊԾԸ. յիշատակին զիւր ծընողի»։ Քաղքէն մէկ ու կէս ժամ հեռաւորութիւն ունի, ամէն ազգի ուխտաւոր գունդ գունդ կը գիմէ. ջրարբի արտեր քիչ, իսկ անջրդի շատ կան, որթատունկի տեղը շափաղանց է, նոր ձեռնարկներ եղան պարտէզներու համար. նաեւ շինուեցան փառաւոր ու ճաշակաւոր սենեակներ, այժմ սենեակները 25—30ի կը հասնին, տաճարն եւս ունեցաւ նորոգութիւններ։ Ունի գաւթին մէջ միաբանի մը գերեզմանը. ունի շատ մը ծառեր պտղատու, նշանաւոր է Գօզլուգի վայրըն ու ջուրը սառնորակ, երեք դարաւոր ընկուզեններ կը հովանաւորեն զայն. ուխտաւորներ աւելի հոս կը դիմեն ուխտի քան վանքը։

Երեք վանքերը գրական տեսակետով շատ աղքատ մնացած են, ունեցած չեն ճոխ միաբանութիւն մը փայլող. այս մասին առաջները ի գոյ եղած գրչագիր յիշատակարանն ալ բաներ մը ըսած չէ ընաւ. միայն Ս. Փրկչի վանքը մասնակի զբաղողներ ունեցած է թղթի ու գրչին հետ, կարծես երկուքին շէնքերն ալ նոյնին վկան են. ու 100 տարիէ ասդին եկող գացող վանահայր Առաջնորդներն ալ որոշակի աշխատութիւն մը թափած չեն ո՛չ նիւթական և ո՛չ բարոյական տեսակէտով։ Վանքին արտերու ու պարտէզներու աւելի աշխատած են երկու մշակներ. մին Վէլի տայի կոչուածը ու միւսը Միքայէլ եղբ. իսկ եպիսկոպոսներուն մէջ Սրապեան եպիսկ. Ս. Փրկչի վանքին բաւական նայած է ու Սահակ եպիսկ. Լուսաւորչայ ջուրը բերել տուած է. վարդապետներուն մէջ Սաչլը Մատթէոս վրդ.ը շատ աշխա-

տած է և քիչ մըն ալ բնիկ Աւակէլեան Յարութիւն վրդ. իսկ նաչեր վրդ. օրով Ս. Փրկչի վերջի միայնակ շէնքերը շինուած են. Մալաթիա ԳԵՈՐԳ ՎՐԴ. ԱՍԼԱՆԵԱՆ

ՄՍԵՐԻԿԵՄՆ ԳՕԼԷՔ ԱՂԶԿՍՆՑ

Ս Կ Ի Ի Տ Ա Ր

Վարժարանիս վերամուտը տեղի պիտի ունենայ սեպտ. 14ին։ Գիշերօթիկները կը սպասուին 13ին։

Գոլէճն այս տարի տեղւոյ անձկութեան պատճառով պիտի չընդունի 14 տարեկանէ վար աշակերտուհիներ։ Սակայն ուսումնարանի չորս կարգերու և նախապատրաստական բարձրագոյն երեք կարգերու աշակերտուհիներուն ամէն կերպով պիտի ընծայէ և, եթէ հնար ըլլայ, պիտի աւելցնէ ալ սովորական դիւրութիւնները։ Այս եօթը կարգերու աշակերտուհիներուն թիւը պիտի չզգուշուի, և ըստ սովորականին մասնաւոր աշակերտուհիներ պիտի ընդունուին գոլէճին մէջ։

Սեպտեմբերին վարժարանս ընդունուիլ ուղղողներ կանխաւ դիմում ընելու են. նաեւ ակները կրնան Տր. Փէթրիքի Ղրկել Անգլ. նախակառան միջոցաւ, կարելի է նաեւ անձամբ գոլէճ երթալ Սեպտ. 1է ետքը։

ՀԱՅՈՒՂԵՍՑ ՎՈՐԺԱՐԱՆ ԱՏԱՂԱՍՐ

Այս վարժարանը, զոր կը վարեն ինն անդամներէ բաղկացած խնամակալութիւն մը, և բնիկ ու Ամերիկացի 11 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը, հիմնական դաստիարակութիւն մը կուտայ բոլոր իրեն դիմող հայ աղջիկներուն։ Կ'աւանդուին բնական, իմաստասիրական, շափական և այլ գիտութիւններ։ Մասնաւոր ոյժ կը տրուի հայերէն և անգլ. լեզուներուն. կ'ուսուցուին նաեւ թուրքերէն և ֆրանսերէն լեզուները։ Վարժարանին երկու ընդարձակ և օգուէտ շէնքերը, ինչպէս նաեւ խնամակալութեան երկու բժիշկ անդամները մեծապէս կ'ապահովեն աշակերտուհիներուն առողջութիւնը։ Անատուրի երկաթուղին և որուն մէկ մասնագիծը մինչեւ քաղաքս կ'երկարի, ճամբորդութիւնը խիստ դիւրին եւ հաճելի կ'ընծայէ Գիշերօթիկներու տարեց

Թոշակն է 12 օսմ. ոսկի, գոր երկու մասնա-
վճարով պէտք է հատուցանել: Դաշնակի
դասի համար 5 կամ 3 ոսկի կը պահանջուի,
դասառութեան թիւին համեմատ: Երգեհոնի
դասի համար 2½ ոսկի կը պահանջուի: Վար-
ժարանին ի՞նչ տարելը կը կսի Սեպտ.
12 (Ն. Տ.) Դշ. իրիկունը: Վարժարանին նոր
յայտագիրն ուզողներուն ձրի կը զրկուի:
Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր.
Բիդի, Պայպըլ Հաուս, Կ. Պոլիս, կամ
գրել Տօքթ. Ս. Էֆ. Գալաթեանի, Ատենա-
պետ ինամակալութեան, Ատաբազար:

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐժԱՐԱՆ

Ազգ. Կեդրոնական վարժարանի ինամա-
կալութիւնը կը ծանուցանէ թէ՛ վարժարա-
նին նոր տարելը կը կսի յառաջիկայ
Սեպտեմբեր 4, երկուշաբթի օր: Ա. կարգ
մտնել փափագող աշակերտները կը հրաւի-
րուին ներկայանալ Ղալաթիոյ Խորհրդարանը
ամէն օր մինչև ժամը 3½ ը. թ., իսկ չորեք-
շաբթի և շաբաթ օրերը մինչև ժամը 9 ը.
թ. արձանագրուելու համար: Պատ. Ու-
սուսն. Խորհրդոյ կողմէ վկայուած շրջանա-
ւարտները առանց քննութեան կ'ընդունուին:
Մտից քննութիւնները պիտի կատարուին
յառաջիկայ օգոստ. 17, Եշ. և Ուր. օրերը
ժամը 1½ ը. թ.:

Իսկ Կեդր. Նախակրթարանի բացումը
տեղի պիտի ունենայ յառաջիկայ Օգոստոս
21, երկուշաբթի օր: Հետևաբար կը հրա-
ւիրուին թէ՛ հին և թէ՛ նոր գալիք աշա-
կերտները մինչև նոյն օր ամէն առաւօտ
ներկայանալ Ղալաթիոյ Խորհրդարանը՝ ար-
ձանագրուելու համար:

Թէ՛ Կեդրոնական վարժարան և թէ՛ Նա-
խակրթարան մտնելու համար ներկայացող
նոր աշակերտները պէտք է ի ձեռին ունե-
նան պատուաստի, ծննդեան և բարի վարքի
վկայագիր և իրենց ծնողքը կամ պաշտպանը
պէտք է ընկերանայ իրենց՝ արձանագրու-
թեան օրը:

Ի դիմաց ինամակալութեան

Ատենադպիր Ատենապետ
Թ. ՄՈՒՐԱՏԵԱՆ Թ. ԷՍԱԵԱՆ

6 Յուլիս 1906, Ղալաթիա

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐժԱՐԱՆ

Պ Ա Ր Տ Ի Զ Ա Կ

Վարժարանիս նպատակն է՝ բնիկ ու ա-
մերիկացի կարող ու փորձառու ուսուցիչնե-
րու խումբով՝ տալ իր ուսանողներուն հիմ-
նական, առողջ դաստիարակութիւն մը,
համաձայն՝ գործնական կեանքի պահանջու-
մներուն: Աշակերտները կը վայելեն բժշկական
և ընտանեկան կատարեալ խնամք վարժա-
րանին մասնաւոր բժշկին, գիշերօթիկ և ու-
սուցիչներու անմիջական հսկողութեան և
Տիկին Չէյմպըրսի մայրական հոգածութեան
տակ: Նորակառոյց և գեղեցիկ շէնք մը
կ'աւելնայ վարժարանին օղակէտ շէնքերուն
վրայ, իր մէջ պարունակելով ընդարձակ
սրահ մը, գրատունը և մարմնամարզատունը:
Վարժարանին վերամուտը կը սկսի սեպտ.
5ին (Բ. Ե.) Դշ. օր, ինչ ինչ նորագոյն կար-
գադրութիւններով: Յառաջիկայ տարելը-
ջանին՝ աւելի ուժ պիտի տրուի ֆրանսերէնի,
իսկ անգլիերէնի՝ համար պիտի շարունակուին
այն կարգադրութիւնները որոնք անցեալ
տարի մեծապէս արդիւնաւոր եղան՝ աշա-
կերտները զարգացնելու լեզուին գործնական
վարժութեանց մէջ, երեք ամերիկացի գի-
շերօթիկ ուսուցիչներու մասնաւոր խնամքին
տակ:

Գիշերօթիկներուն տարեթոշակն է 16
օսմ. ոսկի, որուն կէսը վճարելի է սեպտ.ին
սկիզբը, իսկ մնացեալը՝ յունվարի մէջ:
Գործիական երաժշտութեան դաս առնողները
պիտի վճարեն տարին 1 ուկէս օսմ. ոսկի:
Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր.
Բիթի կամ վարժարանին Պոլսոյ գործակա-
տար Դրիգոր Էֆ. Շահպաղեանի, Պայպը-
Հաուս, Կ. Պոլիս, և կամ Տնօրէնութեան
ի Պարտիզակ: Թէ՛ հին և թէ՛ նոր աշա-
կերտք, եթէ կուզեն Հայտար-Փաշայէն
ի դմտ կէս զինով ճամբորդել, պէտք է
դիմեն Գ. Շահպաղեան Էֆ. ի և իրենց ա-
նունները արձանագրել տան մինչև օգոստ.
17/30:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Skr. եւ Söork—ՏՈՔԹ. ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՆՍԷԿ Օրագրի

ԱՐԱՆՈՒՄ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ

Ի Զ. Մ. Ի Տ.

Կրասնոգոր

Հրդեհի եւ ծով-յն ապահովագրութիւններ՝ շահուէտ պայմաններով։
Այլն առաւել գովաւորի գործեր, ներածում, արտածում եւ մագալի գործողութիւններ։
Ներապահան առաջնակարգ գործարաններու միջոցաւ՝ գումար եւ պարզ պատկերա-
շարդ քաւթ-բամբակեայ պատրաստութիւն, Ֆորօկրամի կոմիտէ։

Կր հայրայթ

«Թաժա Սթիմա» Անգլ Տան գրամարկայիններէն։

Սոցալիտ առաջնակարգ բիւսնոցներ՝ շաքարակոծ վճարումներով։

Այլն ապահովելիս դրութեամբ պիտի լինեն։

Այլն առաւել երկրագործական եւ թիթեղագործի մեքենաներ։

Ուղղութեամբ քանակութեամբ եւ առաւել ընտիր եւ կառուէտ թէյեր։

Գումարաւորի լոնձարարութիւններ փութով կը կատարուին։

8-10

Հասցէ՝

ԱՐԱՆՈՒՄ Կ. ԿՏԱԻՃԵԱՆ Իզմիր

PHOENIX ASSURANCE Ld. Co.

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵԱՆ Ի ԼՈՆԴՈՆ 1782 ԻՆ

ՆԸ ՊՈՐՏԻ Ի ՊՈԼԻՍ 1869ԻՆ Ի ՊՆՔ

ԱՆԳԼ. ԵՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագրութիւն եւ պահեստի դրամ

Անգլ. ոսկի 4,218,000

Ֆինիքս առաւել հրդեհի դէմ Ապահովագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ իր պատուաւորութեամբ եւ փառաւոր մէջ իր անմիջական վճարումներով։

Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի եւ կայծակի դէմ աճէն առաւել աշխարհ եւ շաքարակոծ քաւթ-բամբակեայ պատրաստութիւն։

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ. Տարդ վճարած է առաւել քան 27,000,000 անգլ. ֆլէր.

Ընդհ. գործակալ Գալուս, եւ գաւառացի.

Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ
Վերալիս խան, Գանգ Օրոմանի մօտ
Ղալաբիա։

Փոխ գործակալ Ի Պոլիս.

ՃԻՎԱՆ ԹԵՔԵՆԱՆ

10-10

Ֆենգիլիան խան

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՄ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Գալաթա-Սերայի Լիսէին դ'մ

Գե. Նե. Շր. օրերը առաւօտեան կանու-

խան մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

Բե. Դե. Ուր. օրերը ճեմ մինչեւ 11 1/2

Վերալիս օրի. ր Գալաթա-Սերայի 10-10



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱՐԿԱՇՔ

1881 ժառ 20ի Կայս. Ուղարկով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնք

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդուն, ՀՐԴԵՀ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՇՆԵՐՈՒ ԴԷՄ.

Ինչ չէ նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կարուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,666 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

149,852,000 »

Ընկերութեան ապահովագրութեան վճարուած դրամա-

դրութիւն եւ վնասուց հատուցում

355,840,000 »

1903 ամբողջ մէջ գանձուած ապահովագրին եւ տուցոս

64,553,800 »

Ամէն տեսակ անդեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան Թան, Վոյվոսա, Ղալաթիա,

10 - 10

ԱՌԻԹԷՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հ Ե Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Հերձոյի վաճառատն, Կ. Պոլսոյ Կեդրոնատեղին, ուրի եւ արծաթ շքաներու, գրգռի. պատի եւ քոնսոյի ժամ Եւ յերու մասնաւոր վաճառումէն դու. իր բոլոր խաբիւ յաճախորդներուն վաճառութեւն քաջաւորութեւն այս անգամ կը փութայ յայտարարել թէ ա. մէն եղանակի յատուկ վճարին նշանակուած զայս պատշաճ աւելի աւելն, կանանց եւ աղայոց համար աւելն աւելի Կապուտեան ու անձեւի համար մաշակա վերանորոգիչներ, նաեւ ձերմակեղաններ, ֆանթեզիներ եւ Թափեղներ ու ամերիկեան կոշիկներ: Ունի նաեւ կանկարաւոր, ձեղանի լամպաներ, մանձաղիւններ, երազապան ու անգլիական գորգեր, գետնի մաշակապներ, կրօնֆօններ ու պիտիք էթներ՝ ամենավերջին հասարակութիւններով:

Հերձոյի վաճառատնը իրականապէս ու լաւօրէն շահած է Կանաւթեան վաճառութիւնը եւ գոյնաւորութիւնը իր ազդեցութեան տակաւնութեան եւ ուրիներու մաքրութեան, ձեւաւորութեան եւ տաճարութեան համար:

Այս ամէնուն արդեաւ արժէքին վաճառումն է

Ա. Պ. Ա. Ռ. Ա.

Միտի թէ գնուած ապրանքին Կարիւրին 20ը Կանխիկ. իսկ մնայեալ դաւանին համար շարժութեան Կարիւրին 5 վճարմամբ պատրաստ է Կայթայիւ:

Վաճառատնն Կառաւարտ է

ՄԵՄ-ՇՈՒԿԱՅ. ՈՍԿԵՐՉԻՑ ՄԵՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է Կանաւթեան Կառար թէ՛ Հերձոյի անդրեղի կաշ. մակերպութիւնը մը ի վիճակի է այսօր Կանաւթի իս ամէնէն դժուարեան յաճախորդները: Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ:

Սակարկութիւն չկայ:

Շարժութեան վճարմանը համար Կառարները մէկը պատրաստ են:

10 - 10

ՆԱԶԱՐԷԹ ԽԱՉԵՐԵԱՆ

ՓԱՍՏԱՌԱՆ

Պոլիս, Մարտունիք, Պարնաթան խան
Թիւ 26

Ամէն կարգի դատեր կը ստանանէ եւ խնդրոյ առարկայ եղած քործերու համար թէ՛ բերանացի եւ թէ՛ թղթակցութեամբ բանակցութիւններ կը կատարէ եւ կարծիք կը յայտնէ. կը խմբագրէ եւ կը թարգմանէ դատերու եւ առեւտրական ու սովորական պայմանագրութեանց վերաբերող թուղթեր: Ուրբաթ օրերը մինչեւ կէս օր ձգիւ. բար խորհրդակցութիւն կը կատարէ եւ կարծիք կը յայտնէ:

Ապահովագրական գործառնութիւններու եւ ի մասնաւորի կենցիկի ապահովագրական ընկերութեանց նկատմամբ տնկրոժեշտ եղող տեղեկութիւնները ձգիւք բար կուտայ:

Կը յանձնարարէ որ մինչեւ որ այս մասին հարկւոր եղած տեղեկութիւնները իրմէ չստացուին, ապահովագրութիւն չի ստորագրուի: Ապահովագրական միասնաց հասարակական մարմնի եւ փոխալծէք երաւ գանձումներ կը ստանանէ:

7 10

ԴԵՐՁԱԿ

ՎԻՉԵՆ ԱԼԱՃԱԵԱՆ

Ղալաթիա, Հաւանք փողոց թիւ 13

Հաւաքական կերպով ու ձեռքով հաշուող պատրաստել աւելցողներ, որոնք միանգամայն ստանութիւն կը փորձեն եւ վճարման դիւրին պայմաններ, կրօնական դիմել այս նոր բացուած խանութք, եւ սեռական գանդեր մնան:

7-10

ԱՆԳՂԻԵՐԵՆԷ-ՆԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ԲՐՕՑ. Վ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆԻ

Սակաւութիւն օրինակներ մնացած են եւ կը ծախուին Յ. Մարթեոսեան թղթով ձեռնարք

Յիւնահռչակ, Ամերիկայի խան թիւ 27 Կ. Պոլիս
Դից 60 դրո.

Դաւաւայ համար 64 չորշ. բոթարի ծախքով

7-10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ, բայց կական կէտն է լաւ մեքենայ մը ունենայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ի

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ճեռքի, ուսքի ու ուսքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՀԱՅԹԱՅԹԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒԹՅՆԵՐ

ԲԵՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիսէին դէմ.

ԿՍԼԱԹԱ

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէոյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԵԻՒՑԱՐ

Չարշը Պօլու, Թ. 120.

Գասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ երաւիտաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր փաղափեռունք սեջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը: 10—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ. ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ ի վեր կը դարձանէ ռումբօքի, աղեաց, միզային ճանրանքու հիւանդութիւնները, ջղային աղբուրութիւնները, հին եւ նոր գաղեկան ախտերը: Այս վերջին ախտերը՝ առանց ռումբօքի խնդրաման եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ վերջը Զարեհաբէր օրեր միայն ձրի: 9—10

Զ. Տ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆԻ երկու կարեւոր հրատարակութիւնները. — Գործնական Բառարան (հայերէն անգլիերէն) որ կը պարունակէ 40,000է աւելի բառեր, ասութիւններ եւ ոճեր: — Դին լաթակազմին՝ 35 շրջ.: — Նոյն հեղինակէն Զարեհաբէրեան խօսակցութիւն (հայ., զաղղ., անգլ., գերմ.) բաժնուած երեք մասերու, բառագիրութիւն, խօսակցութիւններ, նամականի: — Դին լաթակազմին՝ 12 շրջ.: — Վարժարանաց համար մասնաւոր զեղչ: 6—10

Սինկէրի գեղարուեստական կրդ ծուցահանդէսը բացուած է Բերայի ընդհ. Տնօրէնութեան սրահներուն մէջ, Պօն-Մարչէի ղիւմաց: Ծուցահանդէսը ամէն օր բաց է եւ ուտքը ազատ: 6—10